նորոգում և ապահովում ամբողջ տարվա հաջողությունը՝ առատությունը և ուրախությունը, նաև վերացվում էր տխրություն առաջացնող ամեն առիթը։

Դօվլաթ կըրկենու օր: *Հունվարի 4-ը կըկէնու կամ դօվլաթ կըկէնու օր է*[15]։ *Արևի մայր մտնելուց հետո խմորը հունցում էին ձեթով կամ ճղօպուրի՝ ընկույզի* ճէղէպավ—*փափուկ միջուկով, մեջը դնում էին* ճօւճի կօրէնց՝ *հոնի կորիզ կամ լոբի, երբեմն մանր դրամ։ Խմորը կլորում, ետ տանում և հաստ բաղարջի ձև տալով* օջախի *կրակի վրա (մեծ մասամբ մոխրի մեջ), թխում էին։ Թխելուց հետո մի շորով մոխիրը վրայից մաքրում էին և հաշվելով տանեցիներին, նաև կովերից կամ ձիերից մեկին՝ այդ թվով մասերի կտրում։ Որի բաժնի մեջ կորիզն էր՝* դօվլաթն *էր դուրս գալիս, նրա* կըլօխին՝ *գլխին էր այդ տարվա* դօվլաթը, *այսինքն՝ ինչ որ այդ տարին ընտանիքի գլխին էր գալու, լավ թե վատ, նախ և առաջ նրա գլխին էր կատարվելու։ Եթե կտրելիս դանակը կպչում էր կորիզին՝ լոբուն, դրամին, դա նախագուշակություն էր, որ այդ տարին տան ծերերից մեկը մեռնելու էր, նրա* օրը կտրվէլու *էր, պակասելու էր։*

Ծննդյան ճրագալույց: *Սա կատարվում էր եկեղեցու սահմանած եղանակով։ Ջանգեզուրումն էլ այդ իրիկուն շատերը մասն էին առնում՝ հաղորդվում էին, ամբողջ օրը* ծում *պահելով։ Ավելի բարեպաշտներն այդ երեկոյին նախորդող պասի ամբողջ ընթացքում, սրբություն առնելուց առաջ,* միաժում *էին լինում, այսինքն՝ օրվա մեջ մեկ անգամ էին հաց ուտում, այն էլ արևի մայր մտնելուց հետո։*

Ճրօխնէք: *Ջրօրհնյաց տոնին խաչն էին* ճուր քըցըմ: *Թեև այդ ծիսակատարությունը նկատվում էր որպես Քրիստոսի մկրտության հիշողությանը նվիրված հանդիսակատարություն, սակայն հենց այդ ավանդության մեջ խորն արմատացած են շատ հեռավոր անցյալից եկող* մագիկ միջոցառումների նշաններ: *Այնպես, ինչպես այդ հանդեսը կատարվում էր Ջանգեզուրում, նույնպես հայաբնակ այլ վայրերում, մանրամասնությունները պարզ ցուցաբերում էին ջրի կենսատու ուժի արթնացումը հետապնդող նպատակ։ Այստեղ էլ, ինչպես հայկական այլ գավառներում, ոչ միայն երիտասարդները, այլև շատ հասակավորները*[16] *տկլորված, ցրտից դողդողալով և մուշտակի կամ այլ տաք շորի մեջ փաթաթվելով՝ սպասում էին այն վայրկյանին, երբ խաչը ջուրն էին ձգում, և անմիջապես իրենց նետում էին ջուրը, այն անհողդողդ հավատով, որ օրհնըված ջրի զորությունն իրենց էլ հաղորդվելու է։ Ջուրն օրհնվում էր նրա կենդանարար զորությունն արթնացնելու համար։ Հանդեսի ժամանակ արձակում էին* ռիղունագնէր՝ *աղավնիներ։ Եկեղեցին այս բացատրում է նրանով, թե ըստ ավետարանական ավանդության Քրիստոսի մկրտության ժամանակ սուրբ հոգին աղավնակերպ իջել է նրա վրա։ Բայց հայտնի է, որ Միջագետքում* Աստարտէ–Շամիրամի *պաշտամունքի հետ շաղկապված էր ջրի պաշտամունքը և այդ աստվածուհուն էր նվիրված նաև աղավնին և* Ջրօրհնէքի *ժամանակ աղավնիներ բաց թողնելը պետք է բացատրել ոչ թե Քրիստոսի մկրտության ավանդությունով, այլ ջրի նախնական պաշտամունքով։ Քրիստոսի մկրտության մասին պահպանված ավանդությունն ինքնին ոչ այլ ինչ է, եթե ոչ շատ նախնական սովորության քրիստոնեական ձևափոխություն, սովորություն, որը նպատակ ուներ կաշկանդված ջրի ազատագրումը և նրա կենսատու ուժի*

---

[15] *Կարնո գավառում ասում են* տարի *(ըստ Կարնո դաշտից Ջավախքի Խանչալի գյուղը վերաբնակվածների վկայության)։*

[16] *Օրինակ՝ Գորիսում։*